ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2020 թվականի N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 350-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Բ.ՍԱՀԱԿՅԱՆ***

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

Առաջարկությունները և առարկությունները՝ _____
_____
_____
_____
_____
_____
_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար ***Ժ. Միրզոյան***

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ն որոշման

«Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մայիսի 11-ի
N 350 -Ն որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԾՐԱԳԻՐ) ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսությունը երկրի պարենային ապահովության և անվտանգության ապահովման գլխավոր ոլորտն է և ընդհանուր ռազմավարության մեջ այն ունի առանցքային դեր: Նպատակային քաղաքականության իրականացման ու առկա ներուժի լիարժեք օգտագործման շնորհիվ հնարավոր է որոշակիորեն լուծել բնագավառում ծագած մի շարք խնդիրներ:

2. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատություն ստեղծելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

3. Քաղաքականությունը պետք է նպատակաուղղվի գյուղատնտեսական ծագում ունեցող արտադրանքի արտադրության ծավալի աճին, ներմուծվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելուն, նոր տեխնոլոգիաների ներդրմանը, ինչը պահանջում է պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառում:

4. 2017 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցներով ձեռք է բերվել և հողօգտագործողներին տրամադրվել 13 685 կիլոգրամ արևածաղկի, 3 000 կիլոգրամ հլածուկի, 20 000 կիլոգրամ կտավատի, 20 000 կիլոգրամ սոյայի, 150 000 կիլոգրամ հնդկացորենի, 51 130 կիլոգրամ եգիպտացորենի, 9 336 կիլոգրամ սիսեռի, 14 000 կիլոգրամ ոլոռի և 3 470 կիլոգրամ առվույտի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 291 359 կիլոգրամ ֆոսֆորական և 413 959 կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 2 737 հեկտար արևածաղիկ, 500 հեկտար հլածուկ, 444 հեկտար կտավատ, 363,6 հեկտար սոյա, 2 308 հեկտար հնդկացորեն, 2840,6 հեկտար եգիպտացորեն, 103,7 հեկտար սիսեռ, 70 հեկտար ոլոռ և 158 հեկտար առվույտ:

Բացի նշված միջոցառումներից, անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն մշակողներին: Աջակցության ընդհանուր ծավալը կազմել է 63 120 000 ՀՀ դրամ գումար (315,6 հեկտարի դիմաց):

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 2 205 061 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 22 050 610 ՀՀ դրամ լրավճար:

2016 թվականին «Ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրման խթանման» միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրվել է 23 հեկտար ծխախոտի և 9 հեկտար բազմամյա տնկարկի, իսկ անձրևացման ոռոգման համակարգ՝ 11 հեկտար սոխի մշակության համար:

2017 թվականին նույն միջոցառման շրջանակներում կաթիլային ոռոգման համակարգ տեղադրելու նպատակով հողօգտագործողներին անհատույց տրամադրվել է 170 132 000 ՀՀ դրամ՝ 299,08 հեկտար բազմամյա տնկարկների և 13 746 490 ՀՀ դրամ՝ 43,69 հեկտար ծխախոտի մշակության համար:

Ծրագրի իրականացման արդյունքում 2016 թվականի համեմատ 2017 թվականին շուրջ 2 անգամ ավելացել են արևածաղկի, շուրջ 5 անգամ հնդկացորենի, 2,3 անգամ եգիպտացորենի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել կտավատի, սոյայի, սիսեռի, ոլոռի մշակությունը: Ընդլայնվել են արտադրական նշանակության բանջարանոցների տարածքները, որի արդյունքում կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բադրիջան, պոմիդոր, պղպեղ և սոխ) մթերման ծավալները: Պետք է նշել, որ 2017 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 200 հողօգտագործող:

2018 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով հողօգտագործողներին տրամադրվել 13 261,8 կիլոգրամ արևածաղկի, 125 928 կիլոգրամ կտավատի, 11 000 կիլոգրամ սոյայի, 62 100,8 կիլոգրամ հնդկացորենի, 31 626,6 կիլոգրամ եգիպտացորենի, 13 459 կիլոգրամ սիսեռի, 13 000 կիլոգրամ ոլոռի, 8 400 կիլոգրամ ոսպի, 920 կիլոգրամ լոբու և 8 000 կիլոգրամ առվույտի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 300 745 կիլոգրամ ֆոսֆորական և 348 738կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 2 512,3 հեկտար արևածաղիկ, 2 092 հեկտար կտավատ, 196 հեկտար սոյա, 737 հեկտար հնդկացորեն, 1 977,7 հեկտար եգիպտացորեն, 134,6 հեկտար սիսեռ, 65 հեկտար ոլոռ, 70 հեկտար ոսպ, 9,2 հեկտար լոբի և 400 հեկտար առվույտ:

Անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն և կարտոֆիլ մշակողներին: Աջակցության ծավալը կազմել է բանջարեղենի համար 65 202 000 ՀՀ դրամ գումար (326,01 հեկտարի դիմաց) և կարտոֆիլի համար՝ 6 600 000 ՀՀ դրամ գումար (44 հեկտարի դիմաց):

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 1 385 820 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 13 858 200ՀՀ դրամ լրավճար:

Ծրագրի իրականացման արդյունքում 2017 թվականի համեմատ 2018 թվականին շուրջ 5 անգամ ավելացել են կտավատի, 2,4 անգամ հլածուկի, 2,3 անգամ սիսեռի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել հլածուկի և սորգոյի մշակությունը: Ընդլայնվել են արտադրական նշանակության բանջարանոցների տարածքները, որի արդյունքում կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բադրիջան, պոմիդոր, պղպեղ, գազար, կաղամբ, ճակնդեղ, սխտոր և սոխ) մթերման ծավալները: 2018 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 370 հողօգտագործող:

2018 թվականին ոռոգման կաթիլային համակարգերի տեղադրման նպատակով ներկայացվել են թվով 84 հայտեր, ընդհանուրը 1 018,9 հեկտարի համար, որից բավարարվել է 51-ը՝ 634,5 հեկտարի համար, այդ թվում՝ 40-ը (513 հեկտար)՝ բազմամյա տնկարկների մշակության համար, 8-ը (47,8 հեկտար)՝ ծխախոտի մշակության համար, իսկ 3-ը (73,7 հեկտար)՝ բանջարաբոստանային կուլտուրաների մշակության համար: Բավարարված հայտերի ընդհանուր արժեքը կազմել է 1 280 538 190 ՀՀ դրամ, որից անհատույց տրամադրման ենթակա գումարը կազմել է 400 624 314 ՀՀ դրամ, անտոկոս

փոխառության տեսքով տրամադրման ենթակա գումարը 551 931 646 ՀՀ դրամ, մնացած գումարի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից:

2019 թվականին բուսաբուծության զարգացման նպատակով հողօգտագործողներին տրամադրվել 12 487,81 կիլոգրամ արևածաղկի, 304 785,5 կիլոգրամ կտավատի, 26 622 կիլոգրամ սոյայի, 190 955,6 կիլոգրամ հնդկացորենի, 94 765,42 կիլոգրամ եգիպտացորենի, 38 155 կիլոգրամ սիսեռի, 23 800 կիլոգրամ ոլոռի, 11 700 կիլոգրամ ոսպի, 1 200 կիլոգրամ հլածուկի, 48 կիլոգրամ սորգոյի, 13 298,4 կիլոգրամ առվույտի և 73 180 կիլոգրամ կորնգանի սերմեր: Պարարտանյութերից տրամադրվել է 191 150 կիլոգրամ ֆոսֆորական և 191 150 կիլոգրամ կալիումական պարարտանյութեր: Արդյունքում ցանվել է 2 810,6 հեկտար արևածաղիկ, 5 396,8 հեկտար կտավատ, 189,7 հեկտար սոյա, 2 074,2 հեկտար հնդկացորեն, 4 447,2 հեկտար եգիպտացորեն, 277,4 հեկտար սիսեռ, 118,5 հեկտար ոլոռ, 100,5 հեկտար ոսպ, 100 հեկտար հլածուկ, 444,5 հեկտար առվույտ և 458,8 հեկտար կորնգան:

Անհատույց ֆինանսական աջակցություն է տրամադրվել բանջարեղեն և կարտոֆիլ մշակողներին: Աջակցության ծավալը կազմել է բանջարեղենի համար 33 750 000 ՀՀ դրամ գումար (168,75 հեկտարի դիմաց), պոմիդորի համար 2 650 000 ՀՀ դրամ գումար (10,6 հեկտարի դիմաց) և կարտոֆիլի համար՝ 7 770 000 ՀՀ դրամ գումար (51,8 հեկտարի դիմաց):

Անհատույց ֆինանսական միջոցներ է տրամադրվել նաև ջերմոցային տնտեսությամբ զբաղվող թվով 10 տնտեսվարողների, աջակցության ծավալը կազմել է 1 857 000 ՀՀ դրամ գումար ընդհանուր 9285 քմ-ի դիմաց:

Ծխախոտի մշակությամբ զբաղվող հողօգտագործողներին մթերված 1 012 300 կիլոգրամ հումքի դիմաց տրամադրվել է 10 123 000 ՀՀ դրամ լրավճար:

Ծրագրի իրականացման արդյունքում 2018 թվականի համեմատ 2019 թվականին ավելացել են շուրջ 2 անգամ սիսեռի, 2,2 անգամ եգիպտացորենի, 2.6 անգամ կտավատի ցանքատարածքները: Շրջանառության մեջ է դրվել հլածուկի և սորգոյի մշակությունը: Կրկնապատկվել են բանջարեղեն վերամշակող ընկերությունների կողմից տեղական բանջարեղենի (բադրիջան, պոմիդոր, պղպեղ, գազար, կաղամբ, ճակնդեղ, սխտոր և սոխ) մթերման ծավալները: 2019 թվականին նշված ծրագրից օգտվել է ավելի քան 1 480 հողօգտագործող:

2019 թվականին ոռոգման կաթիլային և անձրևացման համակարգերի տեղադրման նպատակով ներկայացվել են ընդհանուր 48 հայտեր, որից 42 հայտեր ներկայացվել են ոռոգման կաթիլային համակարգեր տեղադրելու նպատակով՝ ընդհանուր 917,79 հեկտարի համար, որից բավարարվել են 35-ը՝ 640,63 հեկտարի համար, այդ թվում՝ 20-ը (316,23 հեկտար)՝ բազմամյա տնկարկների մշակության համար, 12-ը (53,4 հեկտար)՝ ծխախոտի մշակության համար, իսկ 3-ը (271,0 հեկտար)՝ բանջարաբոստանային կուլտուրաների մշակության համար: Բավարարված հայտերի ընդհանուր արժեքը կազմել է 930 583 220 ՀՀ դրամ, որից անհատույց տրամադրման ենթակա գումարը կազմել է 245 052 985 ՀՀ դրամ, անտոկոս փոխառության տեսքով տրամադրման ենթակա գումարը 632 715 545 ՀՀ դրամ,

մնացած գումարի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից (52 817 690 ՀՀ դրամ):

6 հայտեր ներկայացվել են ոռոգման անձրևացման ստացիոնար և շարժական համակարգեր տեղադրելու նպատակով՝ ընդհանուր 542,98 հեկտարի համար, որից բավարարվել են 5-ը՝ 408,58 հեկտարի համար, գարնանացան միամյա մշակաբույսերի մշակության համար: Բավարարված հայտերի ընդհանուր արժեքը կազմել է 145 772 910 ՀՀ դրամ, որից անհատույց տրամադրման ենթակա գումարը կազմել է 46 894 120 ՀՀ դրամ, անտոկոս փոխառության տեսքով տրամադրման ենթակա գումարը 46 894 120 ՀՀ դրամ, մնացած գումարի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների կողմից (51 984 670 ՀՀ դրամ):

5. Արցախի Հանրապետությունում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի իմաստով օգտագործվող հասկացություններն են՝

1) ոռոգման անձրևացման համակարգ՝ ստացիոնար (ինքնագնաց հենարաններ չունեցող անձրևացման տեղակայանքներ, որի ժամանակ ջուրը ճնշումային ոռոգման փակ ցանցից տրվում է անձրևացման սարքերին) և շարժական (ինքնագնաց հենարաններից, պոմպային ագրեգատից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող ագրեգատներ կամ ինքնագնաց հենարաններից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող մեքենաներ) ոռոգման համակարգեր.

2) բազմամյա տնկարկ՝ այգիները, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղա-հատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր).

3) բանջարեղեն (այսուհետ՝ բանջարեղեն)՝ պոմիդոր, պղպեղ, բադրիջան, սոխ, սխտոր, վարունգ, կաղամբ, գազար, բազուկ.

4) դաշտավարություն՝ երկրագործության ճյուղ, որը գլխավորապես զբաղվում է պարենային, ինչպես նաև թելատու և կերային դաշտային բույսերի մշակությամբ.

5) ընդեղեն մշակաբույսեր (այսուհետ՝ ընդեղեն մշակաբույսեր)՝ ոլոռ, սիսեռ, ոսպ, լոբի.

6) կերային խոտաբույսեր (այսուհետ՝ կերային խոտաբույսեր)՝ առվույտ, ռայգրաս, կորնգան.

7) յուղատու մշակաբույսեր (այսուհետ՝ յուղատու մշակաբույսեր)՝ արևածաղիկ, սոյա, կտավատ.

8) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա՝ ոռոգման կաթիլային, ենթահողային, շիթային և անրձևացման համակարգեր.

9) ջերմոցային տնտեսություն՝ բանջարանոցային մշակաբույսերի աճեցման համար նախատեսված, ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով կահավորված և ջեռուցվող կամ չջեռուցվող լուսաթափանց ծածկոցով կառույց.

10) ցանքաշրջանառություն՝ նույն հողատարածքում իրար հաջորդող առնվազն չորս տարվա ընթացքում չորս տարբեր տեսակի մշակաբույսերի (ցելի) ցանքաշրջանառություն (ցանքափոխություն):

6. Գյուղատնտեսական որոշ մշակաբույսերի տեղական արտադրության ծավալներն ապահովում են ինքնաբավության ցածր մակարդակ, և առաջնահերթ խնդիրը դրանց ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացումն ու ինքնաբավության մակարդակի հետագա բարձրացումն է, մասնավորապես, դա վերաբերում է յուղատու մշակաբույսերին, ընդեղեն մշակաբույսերին, բանջարեղենին, հնդկացորենին, եգիպտացորենին, կերային խոտաբույսերին և ծխախոտին: Հանրապետության բնակչությանը սննդամթերքով ապահովվածության, ինչպես նաև սպառողական շուկայի հագեցվածության հարցում հատուկ տեղ է տրվում նաև պտղաբուծությանը:

7. Առաջնահերթ խնդիր է սեփական արտադրության հաշվին տեղական վերամշակող ընկերությունների կողմից մթերվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը, անասնակերով ապահովվածության մակարդակի բարձրացումը, արտահանման համար մատակարարվող թարմ և վերամշակված պտուղների ծավալների ավելացումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից:

8. Արցախի Հանրապետության կառավարության կողմից հողօգտագործողներին տրամադրվող պետական աջակցության շարունակական ծրագրերը նպաստում են տևականորեն չմշակված վարելահողերի շրջանառության մեջ ներգրավմանը, նոր այգիների հիմնադրմանը, բազմամյա տնկարկների և գյուղատնտեսական մշակաբույսերի ագրոտեխնիկական միջոցառումների բարելավմանը, ցանքատարածությունների, համախառն բերքի, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը և տնտեսական աճի ապահովմանը:

9. Բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը:

10. Գյուղատնտեսության մեջ կիրառվում են ջրման տարբեր եղանակներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները: Ոռոգման կաթիլային համակարգը հիմնված է բույսի արմատային համակարգին՝ ջրի անմիջական մատուցման վրա: Կաթիլային ոռոգումը բույսի արմատային հատվածի դանդաղ և երկարատև ջրամատակարարումն է ողջ վեգետացիայի շրջանում՝ բույսի խոնավության օպտիմալ մակարդակն ապահովելու համար: Կաթիլային ոռոգման ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ առանձին փոքր մակերեսներով կատարվում է հողի տեղայնացված խոնավացում անմիջապես յուրաքանչյուր բույսի արմատաբնակ տարածքում: Ենթահողային ոռոգումը դա ժամանակակից ոռոգման տեսակներից է, տվյալ ոռոգման դեպքում՝ ջուրը պարարտանյութերի հետ միասին մատակարարվում է անմիջապես արմատային համակարգին: Այս տարբերակն ունի բոլոր առավելություններն, ինչ որ ունի կաթիլային համակարգը: Ենթահողային ոռոգման տարբերակի հիմնական թերությունը սկզբնական ներդրման բավականին մեծ լինելն է: Սակայն այս եղանակի ջրախնայողությունը ամենամեծն է և, քանի որ այն գրունտի տակ է, կյանքն ավելի երկար է:

Անձրևացման ոռոգման համակարգի միջոցով ոռոգումն իրականացվում է հատուկ մեքենաների միջոցով, դրանք լինում են ստացիոնար և շարժական: Անձրևացման համակարգերը պակասեցնում են ջրի ճանապարհային կորուստները, սակայն պահանջում բավական մուտքային ճնշում, որը բերում է էլեկտրաէներգիայի լրացուցիչ ծախսերի: Ջրի խնայողությունը մեծ չէ: Այս եղանակի առավելություններն են ջրի կորուստների նվազեցում, ոռոգման գործընթացի շահագործման ծախսերի նվազեցում, հողամասի համաչափ խոնավացում: Այս տարբերակը թույլ է տալիս ոռոգումն իրականացնել խիտ գրաֆիկներով, ըստ բույսի պահանջարկի: Անձրևացման դեպքում հնարավոր է բույսին տրամադրել և՛ պարարտանյութ և՛ բուժման համար անհրաժեշտ դեղորայքներ: Այս տարբերակի թերություններից են մեծ սկզբնական ծախսերը, որոշ կուլտուրաների դեպքում՝ պայքարը հիվանդությունների դեմ, մեծ մուտքային ճնշումները, ինչն իր հերթին բերում է մեծ էներգետիկ ծախսերի:

11. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում բազմամյա տնկարկների, գարնանացան մշակաբույսերի, բանջարաբոստանային կուլտուրաների և ծխախոտի տարածքների ավելացման խթանմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Դաշտավարության մեջ չափազանց կարևոր է ցանքաշրջանառության կիրառումը և ցանքատարածքների կառուցվածքի բարելավումը:

Մեկ տեսակի կուլտուրայի տևական մշակությունը նույն դաշտում իջեցնում է դրանց բերքատվությունը: Դաշտավարության մեջ առանց մշակաբույսերի հաջորդափոխություն սահմանելու, հնարավոր չէ լուծել հողերի բերրիության ապահովման և կայուն բերքի ստացման խնդիրները: Ցանքաշրջանառությունը միայն մշակաբույսերի և ցելերի հաջորդականություն չէ, այլև ագրոտեխնիկական համալիր միջոցառումներ՝ մասնավորապես հողի մշակում, պարարտացում, հողատարման կանխարգելում, որոնց նպատակն է գյուղատնտեսական բույսերից կայուն և բարձր բերք ստանալը: Ցանքաշրջանառությունը մշակաբույսերի և ցելերի գիտականորեն հիմնավորված հաջորդափոխությունն է ժամանակի (տարիների) և տարածության (դաշտերի) մեջ, կամ միայն ժամանակի: Ժամանակն այն գործոնն է, երբ ցանքաշրջանառության մեջ զբաղեցված մշակաբույսերը և ցելերը նույն դաշտում հաջորդում են մեկը մյուսին, իսկ տարածությունը՝ երբ յուրաքանչյուր դաշտում եղած մշակաբույսերը կամ ցելերը տվյալ ժամանակաշրջանում զբաղեցնում են որոշակի դաշտեր:

13. Ցանքաշրջանառության մեջ ճիշտ ընտրված մշակաբույսերի մշակությունը բարելավում է հողի ֆիտոսանիտարական վիճակը, պահպանում՝ էռոզիայից, ավելացնում՝ օրգանական նյութերի քանակը և բարելավում՝ ֆիզիկական հատկությունները: Այդ առումով յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, բանջարեղենի, կարտոֆիլի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի և ծխախոտի մշակությունը կարևորվում է

ցանքաշրջանառության լավագույն բաղադրիչ լինելու, պարենային որոշ մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացման, անասնակերերի կայուն բազայի ստեղծման տեսանկյունից, իսկ ոռոգման կաթիլային համակարգերի կիրառումն ապահովում է մշակվող պտղատեսակների մրցունակության բարձրացումը, մթերման ծավալների ու արտադրվող արտադրանքի ավելացումը:

14. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են ՝

1) արդյունավետ և նպատակային օգտագործել ջրային ռեսուրսները, խթանել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը.

2) բարձրացնել պտղաբուծության ճյուղի արդյունավետությունը, ապահովել երկրի բնակչության կարիքները հայրենական արտադրության թարմ և վերամշակված պտուղներով, խթանել արտաքին շուկաներում ինքնաբավության կարիք ունեցող պտուղների (նուռ, ընկույզ, թուզ, արևելյան խուրմա, ձիթապտուղ, խնձոր, տանձ, սերկևիլ, թութ, հոն և այլն) արտադրությունը, նվազեցնել ներմուծումը և ավելացնել արտահանման ծավալները.

3) ինտենսիվ պտղաբուծության զարգացման խթանման միջոցով իրականացնել պտղաբուծության աշխարհագրության ընդլայնման քաղաքականություն.

4) ապահովել վերամշակող ձեռնարկությունների համար անհրաժեշտ քանակությամբ հումք, այդ վերամշակող ձեռնարկությունների զարգացմամբ և քանակական աճով ապահովել դրանց կողմից օգտագործվող հումքի պահանջարկի բարձրացումը.

5) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի բերքի ինքնաբավության մակարդակի բարձրացումը, սպառման համար անհրաժեշտ ներկրման քանակի նվազեցումը.

6) ցանքաշրջանառությունների կիրառմամբ յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, կերային խոտաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների և գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացումը.

7) տարեկան մշակվող հողերի տարածքի ավելացումը, ագրոտեխնիկական միջոցառումների ժամանակին կատարումը, ցանքաշրջանառության ապահովումը, բարձր ծլունակությամբ սերմացուների օգտագործումը, ցանքի նորմաների պահպանումը:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

2) նռան տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում.

3) յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի (բացառությամբ Պիոներ տեսակի հիբրիդների սերմի, որը հողօգտագործողներին կտրամադրվի արժեքի մասնակի սուբսիդավորմամբ), կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի և ինոկուլյանտի ձեռքբերում ու անհատույց տրամադրում.

4) բանջարեղենի և (կամ) լոբու մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

5) կարտոֆիլի մշակությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

6) ջերմոցային տնտեսությամբ զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

7) ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

8) Արցախի Հանրապետության շրջանների բարձրադիր գոտում պտղատու այգիների հիմնադրման նպատակով տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում:

16. Սույն Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը կտրամադրվի այն անձանց, որոնք չունեն գյուղատնտեսության ոլորտում ծագած հարաբերություններից բխող նախորդ տարիներից կուտակված չմարված պարտավորություններ (հողի հարկ, վարձավճար, մատակարարված ոռոգման ջրի դիմաց պարտք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ ժամկետանց պարտքեր), որը հավաստվում է համապատասխան փաստաթղթով:

17. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

18. Տեղական ինքնակառավարման մարմինները (Ստեփանակերտ քաղաքում՝ նախարարությունը), հիմք ընդունելով նախարարության կողմից սահմանված ժամկետները, յուղատու և ընդեղեն մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորեն, կերային խոտաբույսեր մշակելու ցանկություն ունեցող հողօգտագործողների դեպքում ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայությունը, ընդունում են յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի, կերային խոտաբույսերի, բանջարեղենի, ոռոգման կաթիլային համակարգով ծխախոտի և բանջարեղենի մշակությամբ, ջերմոցային տնտեսությամբ և այգեգործությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողների հայտերը՝ համաձայն N 1 ձևի:

Հայտերի հետ միաժամանակ տեղական ինքնակառավարման մարմիններին (Ստեփանակերտ քաղաքում՝ նախարարություն) են ներկայացվում համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների նկատմամբ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի

համարը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականի կամ համապատասխան տեղեկանքի պատճենները:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների վարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժին:

19. Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող Արցախի Հանրապետության քաղաքացիները (հողօգտագործողներ) ամբողջ տարվա ընթացքում հայտերը ներկայացնում են նախարարություն՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման հնարավորությունները և պայմանները, կցելով վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Մեկ ամբողջություն կազմող միավոր տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ մի քանի անձանց (բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային իրավունքների առկայության պայմաններում, ոռոգման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու համար տրամադրվող պետական աջակցությունից այդ անձինք կարող են օգտվել գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու դեպքում:

20. Շրջանների վարչակազմերն ընդհանրացնում և մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 30-ը, ոռոգման կաթիլային համակարգով բանջարեղենի մշակության դեպքում՝ մինչև ապրիլի 30-ը, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության համար անհատույց ֆինանսական միջոցներ կամ դրանց համարժեք ապրանքանյութեր ստանալու նպատակով՝ մինչև սեպտեմբերի 1-ը նախարարություն են ներկայացնում սույն Ծրագրի 18-րդ կետում նշված տեղեկությունները:

21. Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով ծխախոտի, բանջարեղենի և բազմամյա տնկարկների մշակության դեպքում անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել եռակողմ պայմանագրի գործողության ժամկետից:

22. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամաններով սույն Ծրագրի 20-րդ կետում նշված տեղեկությունների ուսումնասիրման, բանջարեղենի և կարտոֆիլի մշակության համար տրամադրված ֆինանսական միջոցների կամ ապրանքանյութերի նպատակային օգտագործման և իրականացված աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

23. Բազմամյա տնկարկների և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

1) պետական աջակցությունը տրամադրվում է հետևյալ չափանիշներով՝

ա. նոր հիմնադրվող և մինչև երկու տարեկան բազմամյա տնկարկների 1 և ավելի հեկտարի չափով մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

բ. ծխախոտի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

գ. երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների 1 և ավելի հեկտարի չափով մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության միջոցով,

դ. բանջարեղենի և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (միամյա մշակաբույսերի մասով՝ բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

ե. անձրևացման շարժական և ստացիոնար համակարգերով միամյա մշակաբույսերի մշակության համար համակարգի տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով,

զ. 0,5 մինչև 1 հեկտարի չափով հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման նպատակով համակարգի արժեքի 70 տոկոսի չափով անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում.

2) սույն կետի 1-ին ենթակետի «ա», «բ» և «ե» (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի արժեքի 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Սույն կետի 1-ին ենթակետի «ե» (անձրևացման շարժական համակարգի մասով) պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար համակարգի արժեքի 50 տոկոսը տրամադրվում է անհատույց, բայց ոչ ավել քան 7 500 000 ՀՀ դրամ, մյուս 50 տոկոսը՝ անտոկոս փոխառության տեսքով, իսկ համակարգի արժեքը տրամադրվող պետական աջակցության չափը գերազանցելու դեպքում գերազանցող մասը և համակարգի տեղադրման արժեքը տրամադրվում է հողօգտագործողների կողմից:

Սույն կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար անտոկոս փոխառության տեսքով տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի 1 500 000 ՀՀ

դրամը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Սույն կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար մեկ հեկտարի հաշվարկով ոռոգման կաթիլային համակարգի արժեքը 1 500 000 ՀՀ դրամը գերազանցելու դեպքում անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է 750 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով:

Սույն կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար անհատույց տրամադրվում է առավելագույնը 560 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը տրամադրվում է հողօգտագործողների կողմից.

3) նույն հողատարածքում կամ դրա մաս կազմող հողատարածքում սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության նպատակով երկրորդ և հաջորդող տարիների համար տրամադրվում է մեկ հեկտարի հաշվարկով 500 000 ՀՀ դրամ՝ անհատույց միայն կաթոցիկներով ներդրված միջշարային պոլիէթիլենային խողովակների փոխարինման նպատակով:

4) հանձնաժողովն Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, տեղում ճշտում է հողատարածքների մակերեսները, ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ոռոգման ջրի առկայությունը և ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով: Փաստաթղթերի մեկ փաթեթը կազմվում է մեկ կազմակերպության կողմից:

Համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և նախարարություն ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով.

5) սույն կետի 1-ին ենթակետի «ա», «գ» և «ե» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրելու նպատակով նախարարության կողմից սահմանած ժամկետում ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրող լիցենզավորված ընկերությունները (այսուհետ՝ ընկերություններ) նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 3 ձևի.

6) հանձնաժողովը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և՝

ա. տալիս է եզրակացություն, միաժամանակ նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «զ» պարբերություններով նախատեսված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների ֆինանսավորման մասին՝ նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը,

բ. հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը՝ նշելով սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության մասով՝ անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը, իսկ «ա», «գ» և «ե» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակության մասով՝ անհատույց և (կամ) անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարները և անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, վերադարձման ժամկետները կամ վաղաժամկետ մարման հնարավորությունը՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով.

7) սույն կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրելու նպատակով անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարները ենթակա են վերադարձման մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 20-ը.

8) հիմնադրամը՝

ա. դրական եզրակացություն ստացած սույն կետի «ա», «գ» և «ե» (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և ընտրված ընկերությունների հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված դրույթները,

բ. հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա ապահովում է գործընթացի իրականացումը՝ սույն կետի 1-ին ենթակետի «ե» (անձրևացման շարժական համակարգի մասով) պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների հետ կնքելով անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրման պայմանագրեր, իսկ սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «դ» պարբերություններով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների հետ՝ անտոկոս փոխառության պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 6-րդ ենթակետով «բ» պարբերությունով և 7-րդ ենթակետով նախատեսված դրույթները.

գ. սույն կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերությունով և 7-րդ ենթակետով նախատեսված գումարների լրիվ կամ մասնակի վերադարձման դեպքում՝ ապահովում է դրանց փոխանցումը պետական բյուջե.

9) նախարարությունը դրական եզրակացություն ստացած սույն կետի 1-ին ենթակետի «բ» և «զ» պարբերություններով նախատեսված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝

նախատեսելով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ.

10) հիմնադրամը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ.

11) ընկերությունների կողմից ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից.

12) նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 10-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով.

13) պետական աջակցության տրամադրման պարտադիր պայման է հանդիսանում մեկ կուլտուրայի հաշվով նվազագույնը 1 հեկտար (բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության), իսկ բանջարեղենի մասով՝ նվազագույնը 0,5 հեկտար մակերեսով հողատարածքի համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրման նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ նաև տունկը կատարված լինելը.

14) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց արժեքները ենթակա են վերադարձման, ընդ որում՝ անտոկոս փոխառության մասով՝ վաղաժամկետ.

15) հիմնադրամը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ՝ տրամադրված և վերադարձված ու պետական բյուջե փոխանցված գումարների մասին.

16) սույն կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների արժեքի 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տրամադրումն իրականացվում է հիմնադրամի միջոցներով:

24. Նռան տնկիների ձեռքբերում և տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված տարածքներում նռան այգի հիմնադրելու դեպքում հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են նռան տնկիներ՝ 1 հեկտարի հաշվարկով 625 հատ տնկի.

2) նռան տնկիները ձեռք են բերվում նախարարության կողմից և վարչակազմի ղեկավարի ներկայացրած տեղեկության հիման վրա հանձնվում են վարչակազմին՝ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող այգիների մասով՝ հողօգտագործողներին անհատույց տրամադրման, իսկ համայնքների վարչական սահմաններում գտնվող այգիների մասով՝ համայնքի ղեկավարին հանձնելու և համայնքի ղեկավարի կողմից հողօգտագործողներին անհատույց տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով: Հողօգտագործողներին տնկիները տրամադրվում են համաձայն N 4 ձևի կնքված պայմանագրերի.

3) Ծրագրից օգտվելու (նռան տնկիների անհատույց տրամադրում) պարտադիր պայման է հանդիսանում նռան այգի հիմնադրելու դեպքում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքի համար այգի հիմնադրելու նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված լինելը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը հողատարածքը տունկին պատրաստ (հերկված, տեղաձևած և փոսերը փորած) լինելու մասին.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

5) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված նռան տնկիների արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

6) տրամադրված տնկիների նպատակային օգտագործումը ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

7) շրջանների վարչակազմի ղեկավարները տնկիների բաշխման գործընթացն ավարտելուց հետո նախարարություն են ներկայացնում հաշվետվություն կատարած աշխատանքների մասին:

25. Յուղատու և ընդեղեն մշակաբույսերի, հնդկացորենի, եգիպտացորենի (բացառությամբ Պիոներ տեսակի հիբրիդների սերմի, որը հողօգտագործողներին կտրամադրվի արժեքի մասնակի սուբսիդավորմամբ), կերային խոտաբույսերի սերմերի, պարարտանյութերի ձեռքբերում ու տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում նվազագույնը 1 հեկտար մակերեսով հողատարածքում յուղատու և ընդեղեն մշակաբույսեր, հնդկացորեն, եգիպտացորենի և կերային խոտաբույսեր մշակելու համար հողօգտագործողներին տրամադրվում է 1 հեկտարի համար սահմանված համապատասխան քանակությամբ սերմ, պարարտանյութեր, անհատույց (բացառությամբ եգիպտացորենի Պիոներ տեսակի հիբրիդների սերմի, որը հողօգտագործողներին կտրամադրվի սուբսիդավորված գնով՝ 1 հեկտարի հաշվարկով 1 ցանքսի միավոր՝ 35 000 ՀՀ դրամով, տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի սահմանված քանակները ներկայացված են N 1 աղյուսակում).

2) Ծրագրից օգտվելու (սերմի, պարարտանյութի տրամադրում) պարտադիր պայման է համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ հողատարածքը

ցանքսին պատրաստ լինելու, որոշ (առվույտ, եգիպտացորեն, արևածաղիկ) մշակաբույսերի դեպքում նաև ոռոգման ջրով ապահովված լինելու կամ, ելնելով նշված հողատարածքում արձանագրված օդերևութաբանական ցուցանիշներից, տվյալ մշակաբույսերի մշակության համար պահանջվող կլիմայական գոտուն հողատարածքի համապատասխանության մասին.

3) սույն կետի 2-րդ ենթակետում նշված՝ համայնքի ղեկավարի կողմից տրվող տեղեկանքը կարող է տրամադրել համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

4) Ծրագրում ընդգրկված մշակաբույսերի և խոտաբույսերի մշակության համար անհրաժեշտ սերմերի (որոշները նաև հանրապետության տարածքում նախապես փորձարկված) և պարարտանյութերի մի մասը հիմնադրամի կողմից ձեռք կբերվեն և անհատույց (բացառությամբ եգիպտացորենի Պիոներ տեսակի հիբրիդների սերմի, որը հողօգտագործողներին կտրամադրվի սուբսիդավորված գնով՝ 1 հեկտարի հաշվարկով 1 ցանքսի միավոր՝ 35 000 ՀՀ դրամով) կտրամադրվեն հողօգտագործողներին մինչև յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ը (աշնան ցանքսի համար ոլոռի և կորնգանի սերմերը հողօգտագործողներին կտրամադրվեն մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 1-ը)՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա.

5) Ծրագրով նախատեսված կորնգանի սերմերի մի մասը և առվույտի սերմերը հիմնադրամի միջոցով ձեռք կբերվեն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրերով՝ «Բազմամյա կերային խոտաբույսերի մշակություն (կորնգան, առվույտ)» միջոցառմամբ նախատեսված ֆինանսական միջոցներով և կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացրած տեղեկության համաձայն.

6) եգիպտացորենի, կորնգանի, ոլոռի, կտավատի սերմերի և պարարտանյութերի մնացած մասը, լոբու և սիսեռի սերմերը ձեռք կբերվեն հիմնադրամի միջոցներով և անհատույց (բացառությամբ եգիպտացորենի Պիոներ տեսակի հիբրիդների սերմի, որը հողօգտագործողներին կտրամադրվի սուբսիդավորված գնով՝ 1 հեկտարի հաշվարկով 1 ցանքսի միավոր՝ 35 000 ՀՀ դրամով) կտրամադրվեն հողօգտագործողներին՝ նախարարության կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա.

7) պետական աջակցությունը կտրամադրվի այն հողօգտագործողներին, որոնք հանրապետության գոտիական առանձնահատկություններին համապատասխան և ցանքաշրջանառություն կիրառելու անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում կիրառում են ցանքաշրջանառություն.

8) շրջանների վարչակազմերը, մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը, տեղեկություններ են տրամադրում նախարարությանը սերմերի, պարարտանյութերի նպատակային օգտագործման և բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակության վերաբերյալ.

9) տրամադրված սերմերի, պարարտանյութերի նպատակային օգտագործումն ու բնակլիմայական պայմաններին համապատասխան մշակությունը ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են նաև մասնագետներ հիմնադրամից:

10) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված սերմերի և պարարտանյութերի ոչ նպատակային օգտագործման, ինչպես նաև բնակլիմայական պայմաններին անհամապատասխան մշակության հետևանքով ցանքսերի ոչ լիարժեքության (չորացում. թերաճում, բարձր տոկոսայնությամբ նոսրություն) դեպքում տրամադրված սերմերի, պարարտանյութերի արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե:

26. Բանջարեղենի և (կամ) լոբու և (կամ) կարտոֆիլի մշակությամբ և (կամ) ջերմոցային տնտեսությամբ, զբաղվող անձանց անհատույց ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների վարչական սահմաններում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում բանջարեղեն և (կամ) լոբի և (կամ) կարտոֆիլ մշակելու համար 1 հեկտարի դիմաց հողօգտագործողներին անհատույց տրամադրվում է պետական աջակցություն՝ 300 000 ՀՀ դրամ միանվագ գումարի կամ այդ գումարին համարժեք քանակությամբ ապրանքանյութերի տեսքով (մեկ հողակտորի մակերեսը ոչ պակաս, քան 0,5 հեկտար), իսկ ջերմոցային տնտեսությամբ զբաղվող տնտեսվարողներին՝ ջեռուցվող ջերմոցների համար 1 հեկտարի դիմաց 4 000 000 ՀՀ դրամ, չջեռուցվող ջերմոցների համար 1 հեկտարի դիմաց 2 000 000 ՀՀ դրամ (մեկ ջերմոցի մակերեսը ոչ պակաս, քան 100 քառակուսի մետր).

2) հանձնաժողովը Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման վերջնաժամկետից հետո, ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը, ստուգում դրանց ճշտությունը, ընդհանրացնում և տասնօրյա ժամկետում հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած՝ բանջարեղեն և (կամ) լոբի և (կամ) կարտոֆիլ մշակելու և (կամ) ջերմոցային տնտեսությամբ զբաղվելու համար դիմած հողօգտագործողների ցանկը՝ նշելով հողօգտագործողի տվյալները և տրամադրվող ֆինանսական միջոցների կամ դրանց համարժեք ապրանքանյութերի չափը, պետական աջակցության տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով.

3) աջակցությունն անհատույց կտրամադրվի հիմնադրամի միջոցով՝ հանձնաժողովի կողմից ներկայացված համապատասխան տեղեկությունների հիման վրա:

27. Ծխախոտի մշակությունից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց լրավճարի տրամադրում.

1) Արցախի Հանրապետությունում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված վարելահողերում մշակած ծխախոտից ստացված բերքի իրացման (մթերման) դիմաց տրամադրվում է լրավճար՝ 1 կիլոգրամի դիմաց 10 ՀՀ դրամ գումարի չափով.

2) լրավճարը տրամադրվում է Արցախի Հանրապետության տարածքում գործող ընկերություններին մթերված բերքի դիմաց.

3) մթերող ընկերությունները յուրաքանչյուր տարվա ծխախոտի բերքի (հումքի) մթերման գործընթացն ավարտելուց հետո տեղեկություններ են ներկայացնում նախարարություն՝

նշելով բերք հանձնած հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի համարը, մթերված բերքի քանակը.

4) նախարարությունը սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները ստանալուց հետո, տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և դրանց հիման վրա Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում հայտ՝ նշելով մթերող ընկերությունների անվանումները և վճարման ենթակա գումարները.

5) Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերը նշված հայտը ստանալուց հետո սահմանված կարգով հատկացնում է համապատասխան ֆինանսական միջոցները.

6) մթերող ընկերությունները համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում հողօգտագործողներին են վճարում ծխախոտի բերքի իրացման (մթերման) դիմաց սահմանված լրավճարը:

28. Արցախի Հանրապետության շրջանների բարձրադիր գոտում պտղատու այգիների հիմնադրման նպատակով տնկիների ձեռքբերում և անհատույց տրամադրում.

1) Արցախի Հանրապետության շրջանների բարձրադիր գոտում սեփականության, վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված տարածքներում նվազագույնը 0,5 հեկտար, իսկ առավելագույնը 10 հեկտար մակերեսով ամբողջական հողատարածքում այգի հիմնադրելու համար հողօգտագործողներին անհատույց տրամադրվում են խնձորենու, տանձենու, արևելյան խուրմայի, կեռասենու, սև սալորենու, սերկևիլենու, տխլենու, ընկուզենու, զկեռենու և հոնենու տնկիներ՝ համաձայն N 3 աղյուսակի.

2) տնկիները ձեռք են բերվում նախարարության կողմից և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների ներկայացրած տեղեկության հիման վրա հանձնվում են վարչակազմերին՝ համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող այգիների մասով՝ հողօգտագործողներին անհատույց տրամադրման, իսկ համայնքների վարչական սահմաններում գտնվող այգիների մասով՝ համայնքների ղեկավարներին հանձնելու և համայնքների ղեկավարների կողմից հողօգտագործողներին անհատույց տրամադրման գործընթացն ապահովելու նպատակով: Հողօգտագործողներին տնկիները տրամադրվում են համաձայն N 4 ձևի կնքված պայմանագրերի.

3) Ծրագրից օգտվելու (տնկիների անհատույց տրամադրում) պարտադիր պայման է հանդիսանում ծովի մակերևույթից 500 մետր և ավելի բարձր գոտիներում նվազագույնը 0,5 հեկտար, իսկ առավելագույնը 10 հեկտար մակերեսով հողատարածքի համար այգի հիմնադրելու նպատակով հայտի ներկայացումը, այդ հողատարածքը ոռոգման ջրով ապահովված լինելը՝ (բացառությամբ 900 մետր և ավելի բարձր գոտիներում հիմնադրելու դեպքում), համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ շրջանի վարչակազմի, իսկ համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության տարածքների դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը

հողատարածքը տունկին պատրաստ (հերկված, տեղաձևած և փոսերը փորած) լինելու մասին.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկանքները ստորագրում է նաև համապատասխան շրջանի համայնքը սպասարկող գյուղատնտեսը.

5) ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների ոչ նպատակային օգտագործման դեպքում տրամադրված տնկիների արժեքը հողօգտագործողների կողմից ենթակա է վերադարձման պետական բյուջե.

6) տրամադրված տնկիների նպատակային օգտագործումն ստուգելու նպատակով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով.

7) Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարները տնկիների բաշխման գործընթացն ավարտելուց հետո նախարարություն է ներկայացնում հաշվետվություն կատարած աշխատանքների մասին.

8) Արցախի Հանրապետության շրջանների բարձրադիր գոտում պտղատու այգիների հիմնադրման նպատակով աշնան տունկի համար տնկիների պահանջարկի վերաբերյալ հայտերը նախարարություն է ներկայացվում մինչև 2020 թվականի հոկտեմբերի 1-ը:

29. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

30. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) ջրային ռեսուրսների արդյունավետ և նպատակային օգտագործում.

2) նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում.

3) գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և ստացվող բերքի որակի բարձրացում.

4) մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

31. Ծրագրի իրականացումից յուրաքանչյուր տարի նախատեսվում է՝

1) ոռոգման կաթիլային համակարգեր տեղադրել ավելի քան 400 հեկտար բազմամյա տնկարկների և ծխախոտի մշակության համար.

2) հասնել ոռոգման ջրի 100 տոկոսով արդյունավետ օգտագործմանը, 30-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացմանը և ստացվող բերքի որակի բարձրացմանը.

3) ցանել ավելի քան 7 000 հեկտար յուղատու և ավելի քան 500 հեկտար ընդեղեն մշակաբույսեր.

4) վերամշակող ընկերություններում հողօգտագործողներից մթերել ստացված ծխախոտի ամբողջ հումքը.

5) ֆինանսական միջոցները կամ դրանց համարժեք ապրանքանյութերը տրամադրել շուրջ 500 հեկտար բանջարեղենի մշակության համար:

32. Յուղատու և ընդեղեն մշակաբույսերը, հնդկացորենը և բանջարեղենը հումք են հանդիսանում վերամշակող ընկերությունների համար: Յուղատու մշակաբույսերի վերամշակումից ստացված ձեթը, ընդեղեն մշակաբույսերից՝ հատիկը, հնդկացորենից՝ հնդկաձավարը և բանջարեղենից՝ պահածոները հանդիսանում են առաջին անհրաժեշտության պարենամթերք և ունեն մեծ դեր ու նշանակություն մարդու օրգանիզմի նորմալ գործունեության համար: Կերային մշակաբույսերից ստացվում է անասնակեր, որը կնպաստի անասնաբուծության զարգացմանը:

33. Սույն Ծրագրի շրջանակներում տրամադրված պետական աջակցության միջոցով ստացված բերքի մթերումը (իրացումը) պետական աջակցության ծրագրի մաս չի կազմում՝ բացառությամբ մշակված ծխախոտից ստացված բերքի մթերումից (իրացումից):

34. Նվազագույնը 10 հեկտար մակերեսով գործող այգի ունենալու և հետագայում ևս առնվազն 10 հեկտարով այգու տարածքը մեծացնելու հնարավորության, անհրաժեշտ ջրային ռեսուրսների և համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում պետական կամ այլ միջոցներով կկառուցվեն խորքային հորեր (արտեզյան ջրհորներ) և էներգետիկ ենթակառուցվածքներ:

Ձև N 1

Արցախի Հանրապետության _____ շրջանի

_____ համայնքի ղեկավարին

(վարչակազմի ղեկավարին)

ՀԱՅՏ

Դիմող _____

(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը),

հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ

հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Պետական գրանցման վկայականի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսվող աջակցության տեսակը_____

_____

Մշակվող կուլտուրայի տեսակը_____

Մշակվող հողատարածքի մակերեսը_____

Հայտին կից ներկայացվում են՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____

_____

_____

_____ _____

(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

Ձև N 2
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող _____
(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)
_____
Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____
Պետական գրանցման վկայականի համարը _____
Գործունեության իրականացման վայրը _____
Նախատեսվում է ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրել _____հա
_____ համար
(մշակվող կուլտուրայի տարիքը, տեսակը)
_____
Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրող
ընկերությունը_____
Հայտին կից ներկայացվում են՝
1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____
_____
_____

_____ _____
(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

Ձև N 3
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ
Ոռոգման կաթիլային, շիթային կամ ենթահողային համակարգերի ներդրման աշխատանքների մասնակցության

…… ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամություն է հայտնում մասնակցելու ԱՀ կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշմամբ հաստատված «Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվելիք՝ ոռոգման կաթիլային, շիթային կամ ենթահողային համակարգերի տեղադրման աշխատանքներին:

Միաժամանակ հայտարարում եմ, որ՝

- մեկ միավոր հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգի տեղադրումն կիրականացվի Ընկերության կողմից,
- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը և ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ առնվազն երեք տարվա ընթացքում երաշխիքային սպասարկումն իրականացնում է Ընկերության կողմից.

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր՝ Ընկերության գործունեության և կատարած աշխատանքների մասին *(ոչ պարտադիր դրույթ)*:

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Կից ներկայացնում եմ լիցենզիայի պատճենը:

Ստորագրող՝

…… (պաշտոնը)

…… (անունը, ազգանունը)

…… (ստորագրությունը)

….. …… 20__թ.

Ձև N 4

Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N__

ՏՆԿԻՆԵՐԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

_____ «____»_____ 20___ թ.
/կնքման վայրը/

Տրամադրող
□ Արցախի Հանրապետությունը՝
ի դեմս_____

□ Արցախի Հանրապետության _____ շրջանի _____ համայնքն՝
ի դեմս_____

որի անունից □ կանոնադրության հիման վրա □ լիազորագրի հիման վրա հանդես է գալիս՝
անուն_____
ազգանուն_____
հայրանուն_____
հաշվառման հասցե_____
անձնագրի (նույնականացման քարտի) տվյալներ _____

Շահառու
□ Ֆիզիկական անձ
անուն_____
ազգանուն_____
հայրանուն _____
հաշվառման հասցե_____
անձնագրի (նույնականացման քարտի) տվյալներ_____
(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

□ Իրավաբանական անձ
անվանում_____
գրանցման համար_____
գտնվելու վայրը_____

որի անունից □ կանոնադրության հիման վրա □ լիազորագրի հիման վրա հանդես է գալիս՝
անուն_____
ազգանուն_____
հայրանուն _____
հաշվառման հասցե_____
անձնագրի (նույնականացման քարտի) տվյալներ_____
(սերիա, համար, երբ և ում կողմից է տրվել)

Հիմք ընդունելով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման հավելվածի □ 24-րդ կետի 2-րդ ենթակետը, □ 28-րդ կետի 2-րդ ենթակետը, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման հիման վրա Շահառուին անհատույց տրամադրվում է

□ նռնենի _____ հատ
□ խնձորենի_____ հատ
□ տանձենի_____ հատ
□ արևելյան խուրմա_____ հատ
□ կեռասենի_____ հատ
□ սև սալորենի_____ հատ
□ սերկևիլենի_____ հատ
□ տխլենի_____ հատ
□ զկեռենի_____ հատ
□ ընկուզենի_____ հատ
□ հոնենի_____ հատ

_____ ՀՀ դրամի չափով՝ ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների նպատակային օգտագործման և _____ հա այգի հիմնադրելու նպատակով:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Տրամադրողը պարտավորվում է Պայմանագրի 1.1 կետում նշված տնկիները անհատույց տրամադրել Շահառուին՝ համաձայն հանձնման-ընդունման ակտի, որը կազմում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Շահառուն պարտավոր է.

ա/ կատարել Պայմանագրին համապատասխան հանձնվող տնկիների ստացումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները

բ/ ստացած տնկիներն օգտագործել Պայմանագրով սահմանված նպատակներին համապատասխան

գ/ Պայմանագրին համապատասխան տրամադրված տնկիների ագրոտեխնիկական ժամկետներում ոչ նպատակային օգատգործման դեպքում Պայմանագրում նշված գումարը վերադարձնել պետական բյուջե

3. Այլ պայմաններ

3.1. Պայմանագրին ուժի մեջ է մտնում կողմերի կողմից ստորագրման պահից:

3.2. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3. Պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4. Կողմերի ստորագրությունները

Տրամադրող	***Շահառու***
_____	_____
(անուն, ազգանուն)	(անուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	***Կ.Տ.***

ԱԿՏ
հանձման-ընդունման

_____
(հանձնողի ԱԱՀ (անվանումը))

(այսուհետ՝ Հանձնող), մի կողմից և

_____
(աջակցության կարգով տնկի ստացող հողօգտագործողի ԱԱՀ (անվանումը))

(այսուհետ՝ Ընդունող), մյուս կողմից, կազմեցին սույն հանձնման-ընդունման ակտն այն մասին, որ Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում _____
(տնկիների հանձնման վայրը)
_____-ում Հանձնողն հանձնեց, իսկ Ընդունողը ընդունեց Ծրագրով իրեն հասանելիք անհատույց տրամադրվող

□ նռնենի _____ հատ
□ խնձորենի_____ հատ
□ տանձենի_____ հատ
□ արևելյան խուրմա_____ հատ
□ կեռասենի_____ հատ
□ սև սալորենի_____ հատ
□ սերկևիլենի_____ հատ
□ տխլենի_____ հատ
□ զկեռենի_____ հատ
□ ընկուզենի_____ հատ
□ հոնենի_____ հատ

_____ ՀՀ դրամի չափով՝ ագրոտեխնիկական ժամկետներում տրամադրված տնկիների նպատակային օգտագործման և _____ հա այգի հիմնադրելու նպատակով:

Սույն հանձնման-ընդունման ակտը կազմվում է 2 (երկու) օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Հանձնեց	***Ընդունեց***
_____	_____
(անուն, ազգանուն)	(անուն, ազգանուն)
_____	_____
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	***Կ.Տ.***

Աղյուսակ N 1

Տրամադրվող սերմի, պարարտանյութերի և ինոկուլյանտի սահմանված քանակները 1 հեկտարի համար

Հ/հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմերի քանակը (կգ)	Տրամադրվող ինոկուլյանտի քանակը (մլ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
				ֆոսֆոր	կալիում
2018 թվական					
1	Եգիպտացորեն (հատիկ)	20			
2	Եգիպտացորեն (սիլոս)	30			
3	Հնդկացորեն	80			
4	Արևածաղիկ	5		50	100
5	Սոյա	55	130	50	100
6	Կտավատ	50		50	
7	Առվույտ	20			
8	Ռայգրաս	35			
9	Ոլոռ	200			
10	Սիսեռ	100			
11	Ոսպ	120			
12	Լոբի	100			
Հ/հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմերի քանակը (կգ)	Տրամադրվող ինոկուլյանտի քանակը (մլ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
				ֆոսֆոր	կալիում
2019 թվական					
1	Եգիպտացորեն (հատիկ)	16			
2	Հնդկացորեն	80			
3	Արևածաղիկ	5		50	50
4	Սոյա	60	130	50	50
5	Հլածուկ	6		50	50
6	Կտավատ	50			
7	Սորգո	12			
8	Սիսեռ	100			
9	Ոսպ	120			
10	Ոլոռ	200			
11	Կորնգան	100			
12	Առվույտ	20			

Հ/հ	Մշակաբույսը	Տրամադրվող սերմերի քանակը (կգ)	Տրամադրվող պարարտանյութի քանակը (կգ)	
			ֆոսֆոր	կալիում
2020 թվական				
1	Եգիպտացորեն (հատիկ)	1 ցանքսի միավոր		
2	Հնդկացորեն	100		
3	Արևածաղիկ	4	50	50
4	Սոյա	60	50	50
5	Կտավատ	60	50	50
6	Սիսեռ	100		
7	Ոսպ	150		
8	Ոլոռ	200		
9	Կորնգան	120		
10	Առվույտ	20		
11	Լոբի	100		

Աղյուսակ N 3

ԱՀ շրջանների բարձրադիր գոտում պտղատու այգիների հիմնադրման համար տրամադրվող տնկիների քանակները 1 հեկտարի համար

Հ/հ	Պտղատեսակը	Տնկման սխեմա	Մեկ հեկտարի համար պահանջվող տնկիների քանակ (հատ)
1	Խնձորենի	4X5	500
2	Տանձենի	5X5	400
3	Արևելյան խուրմա	5X5	400
4	Կեռասենի	6X6	278
5	Սև սալորենի	4X5	400
6	Սերկևիլենի	4X5	500
7	Տխլենի	4X5	500
8	Զկեռենի	4X5	500
9	Ընկուզենի	6X6	278
10	Հոնենի	4X5	500

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱՉԱՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում պետական աջակցության նոր միջոցառումներ սահմանելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշմամբ հաստատվել է Բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը, որը նախատեսված է մի քանի տարիների համար: Օբյեկտիվ պահանջ է առաջացել պետական աջակցությամբ կատարվող միջոցառումները համապատասխանեցնել 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտում Արցախի Հանրապետության կառավարության կողմից տարվող քաղաքականությանը:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի հիմնական նպատակն է շտկել Բուսաբուծության համալիր զարգացման ծրագրի շրջանակներում սահմանել պետական աջակցության նոր միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքը

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման արդյունքում կամրագրվեն բուսաբուծության ոլորտում 2020 թվականին իրականացվելիք միջոցառումները, պետական աջակցության ձևերը և չափերը:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

*«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

*«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի N 350-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 350-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն

Նախագիծը պատրաստողը՝

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժին

_____ ***Եվ. Հակոբյան***

(ստորագրությունը)